ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղված անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2019թ. մայիսի 13-ից 15-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպական միություն:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության (ԱլԳ) տասնամյակին նվիրված բարձր մակարդակի համաժողովին:

Քննարկված թեմաները՝ Արևելյան գործընկերության բազմակողմ ձևաչափի ապագային առնչվող հարցեր՝ կարևորելով ավելի մրցունակ տնտեսությունները, ավելի արդյունավետ կառավարման և մարդկանց միջև ավելի արդյունավետ շփումների հաստատումը:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2019թ. նշվում է Արևելյան գործընկերության մեկնարկի 10-ամյակը, որի շրջանակներում ս.թ. մայիսի 13-15-ը Բրյուսելում անցկացվել է մի շարք տոնական միջոցառումներ ԱլԳ և ԵՄ ու անդամ երկրների բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությամբ:

Վերը նշված միջոցառումների շրջանակներում ս.թ. մայիսի 14-ին տեղի է ունեցել Արևելյան գործընկերության (ԱլԳ) տասնամյակին նվիրված բարձր մակարդակի համաժողով: Վերջինիս ՀՀ արդարադատության նախարարության կողմից մասնակցել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը: Համաժողովին մասնակցել են նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Գևորգ Լոռեցյանը, ՀՀ տնտեսական զարգացման և

ներդրումների նախարարի տեղակալ Մանե Ադամյանը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բաղալյան:

Համաժողովի նպատակն էր ակտիվացնել շփումներն ԱլԳ վեց երկրների ոլորտային պատասխանատու պաշտոնյաների միջև:

Համաժողովում ԵՄ կողմը ԱլԳ երկրների գործընկերների հետ ամփոփել է Արևելյան գործընկերության տասը տարիների ընթացքում գրանցված ձեռքբերումները և առաջ եկած մարտահրավերները, ինչպես նաև քննարկել Արևելյան գործընկերության՝ որպես համագործակցության բազմակողմ ձևաչափի ապագան՝ շեշտը դնելով ավելի մրցունակ տնտեսությունների, ավելի արդյունավետ կառավարման և մարդկանց միջև ավելի արդյունավետ շփումների հաստատման վրա:

Համաժողովի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը մի շարք ոչ պաշտոնական հանդիպումներ է ունեցել Եվրոպական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաների հետ, որոնց ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների իրականացմանն ուղղված աջակցության տրամադրմանը, կոռուպցիայի դեմ առավել արդյունավետ պայքար իրականացնելու նպատակով համագործակցության ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանն առնչվող և մի շարք այլ հարցեր: Եվրոպական միության գործընկերները ևս մեկ անգամ վերահաստատել են իրենց պատրաստակամությունը աջակցելու ՀՀ-ում վերը նշված ոլորտներում տեղի ունեցող բարեփոխումների իրականացմանը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ

Վիգեն Քոչարյան

20.05.2019թ.